ՀՀ Արարատի մարզի
Արարատ խոշորացված համայնքի
ղեկավար Պրն. Ասլան Ավետիսյանին
«Արարատի երիտասարդական
նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի
նախագահ Գևորգ Մարգարյանից

ԴԻՄՈՒՄ

««Արարատի Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն» Հասարակական Կազմակերպություն»-ը հայտնում է, որ ցանկություն ունի իրականացնել *«Բարեկարգ Երիտասարդական Կենտրոն»* համալիր բարեկարգման ծրագիրը և դիմումին կից ներկայացնում է ծրագրային փաթեթը:

««Արարատի Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն» Հասարակական Կազմակերպություն»-ը հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

««Արարատի Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն» Հասարակական Կազմակերպության»՝

- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 04233431
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ araratyouthcenter@gmail.com
- գործունեության հասցեն է՝ ք. Արարատ ՈԿՖ բանավան 22/1
- հեռախոսահամարն է՝ 095-33-55-11

Սույնով ««Արարատի Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն» Հասարակական Կազմակերպությունը»-ը հայտարարում և հավաստում է, որ պարտավորվում է սահմանված կարգով և ժամկետում կնքել պայմանագիր:

««Արարատի Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն» Հասարակական Կազմակերպություն»

Նախագահ՝ Գևորգ Մարգարյան

Կ. Տ.

«Բարեկարգ Երիտասարդական Կենտրոն» համալիր բարեկարգման ծրագիր
դրամաշնորհային ծրագրի
ԱՌԱՋԱՐԿ

Տիտղոսաթերթ

Կազմակերպության անունը «Արարատի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպություն
Ծրագրի անվանումը *«Բարեկարգ Երիտասարդական Կենտրոն»* համալիր բարեկարգման ծրագիր
Ծրագրի սկիզբ / ավարտ (օր/ամիս/տարի) «01» «մարտի» 2025թ.- «30» «հունիսի» 2025թ.
Ծրագրի իրականացման վայրը/ աշխարհագրությունը (մարզ, համայնք) Արարատի մարզ, Արարատ համայնք, ՈԿՖ բանավան 22 հարակից տարածք
Կազմակերպության ղեկավար Գևորգ, 095-33-55-11, gevorgmargaryan1985@gmail.com
Կազմակերպության գործունեության հասցեն և կոնտակտային տվյալները ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, ՈԿՖ բանավան 22/1, 095-33-55-11, araratyouthcenter@gmail.com
Ծրագրի բյուջե (ՀՀ դրամ) 5.000.000 (հինգ միլիոն)

Համառոտագիր

«Արարատ» Երիտասարդական Կենտրոնի ստեղծման հիմքում դրված է սոցիալական ձեռնարկատիրության այն մոդելը, որը մենք մասնակիորեն կիրառել ենք նախորդ 4-5 տարիների ընթացքում: Կազմակերպության ստեղծման օրվանից, մենք, ներկայացնելով մեր գաղափարներն ու ծրագրերը, ստացել ենք միջոցառումների կազմակերպման պատվերներ և իրականացրել ենք ծրագրեր, որոնք միտված են եղել բարձրացնել երիտասարդների տեղեկացվածության մակարդակը, զարգացնել մասնակիցների կարողությունները, երիտասարդների շրջանում ստեղծել բիզնես միջավայր, ներգրավվել բնապահպանական, մարզային տուրիզմի զարգացման ծրագրերում և լուծել համայնքային խնդիրները:

Փառատոնների մասնակցության, միջոցառումների կազմակերպման պատվերների, տարածքի և տեխնիկական միջոցների վարձակալությամբ օգտագործման վճարները, ինչպես նաև անդամավճարները հիմնական մոդելներն են դառնալու կենտրոնի սոցիալական ձեռնարկատիրական գործունեության:

Նմանատիպ իրադարձություններն իրականացվելու են նաև այլ շահագրգիռ կառույցների, հասարակական կազմակերպությունների, պետական եւ ոչ պետական սեկտորների ծրագրային հատկացումների եւ աջակցության շնորհիվ: Կենտրոնն ունի աշխատակազմ, ովքեր անհրաժեշտ գիտելիքների և փորձառության շնորհիվ իրականացնելու են հանրային և մասնավոր ոլորտների կառույցներից, անհատներից ֆինանսական միջոցների շարունակական ներգրավմանն ուղղված աշխատանքներ, այդ թվում պետական դրամաշնորհային ծրագրերին դիմելու միջոցով:

Ծրագրի նկարագրություն

Արարատ խոշորացված համայնքը մայրաքաղաքից 50 կմ հեռավորության վրա է գտնվում: Այստեղ առկա են մի շարք պատմամշակութային արժեք ներկայացնող կոթողներ, թանգարաններ, հուշարձաններ և զբոսաշրջային վայրեր: Համայնքում բացակայում են բարձրագույն ուսումնական հաստատությունները, առկա են դպրոցներ, քոլեջ, մշակույթի և արվեստի կենտրոն, երաժշտական դպրոց և գրադարան: Երիտասարդների ինտելեկտուալ ժամանցի, գաղափարների իրականացման, կրթական, մշակութային հետաքրքրությունների իրականացման, ինչպես նաեւ մեկ ընդհանուր հարթակում հանդիպումների, քննարկումների, առաջընթաց եւ զարգացում ապահովող ձեւաչափերի կառուցողական մոտեցումների համար հիմնական, կայուն հարթակ առկա չէ, ինչն էլ նպաստավոր պայման է ստեղծում երիտասարդական կենտրոնի հիմնադրման համար: Կենտրոնի ստեղծումը էապես կարող է նպաստել Արարատ քաղաքի եւ հարակից բնակավայրերի երիտասարդների փոխհարաբերության, դրական տեղաշարժի, համատեղ աշխատանքի իրականացման եւ անհատապես

ինքնազարգացման ու ինքնադրսեւորման գործում: Արարատը, ունենալով բազմաթիվ առանձնահատկություններ, մինչ այժմ որևէ ակտիվ նախաձեռնությամբ հանդես չի եկել և չունի իր այցեքարտը: Կենտրոնի ստեղծման և կանոնադրական նպատակների իրականացման արդյունքում, մենք ապահովելու ենք համայնքի ներուժի բացահայտմանն ուղղված միջոցառումներ (օր.՝ ամենամյա փառատոն), որն էլ դառնալու համայնքի այցեքարտը:

Կազմակերպության փորձառությունը

«Արարատի Երիտասարդական Նախաձեռնությունների Կենտրոն» Հասարակական Կազմակերպությունը հիմնադրվել է 2019 թվականին: Կազմակերպությունն իրականացնում է ծրագրեր և նախագծեր, որոնք առանձնահատուկ կերպով նպաստում են երիտասարդների ներգրավվածության ապահովմանը քաղաքացիական հասարակության զարգացման գործում, բիզնես միջավայրի ձևավորմանը՝ երիտասարդության զբաղվածության և ներուժի բացահայտման խթանման միջոցով, առողջ ապրելակերպի խթանմանը, երիտասարդության շրջանում կրթական մակարդակի բարձրացմանը, բնապահպանական ծրագրերին, տեղեկացվածության և իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, մարզական և մշակութային կյանքի ակտիվացմանը, երիտասարդների ներգրավմամբ մարզային տուրիզմի զարգացմանը և ՏԻՄ ոլորտի ուսումնասիրություններին և մոնիթորինգին: Վերը նշված առաքելություններն ու նպատակներն իրականացնելիս կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

- Համաքաղաքային ծառատունկ (27.04.2019թ. Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումների շարք)
- Հանրային քննարկում (27.04.2019թ. Քաղաքացու օրվան նվիրված միջոցառումների շարք)
- Ճանաչողական արշավ (26.05.2019թ. Հայրենաճանաչության միջոցառումների շարք)
- Կրթական դասընթաց-սեմինար (02.06.2019թ. Թեմա՝ կարողությունների զարգացում)
- Համաքաղաքային ծառատունկ (28.03.2021թ.)
- «Հերոսների Պուրակ»-ի ստեղծում նախաձեռնության ակտիվ մասնակցություն (Ապրիլ 2021 – Նոյեմբեր 2021թ.)
- Համաքաղաքային ցուցահանդես-փառատոնի կազմակերպում (22.10.2021)
- Հեծանվային մարաթոն (12.08.2022թ. Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառում)
- «Երիտասարդությունը, թվային տեխնոլոգիաները և դրանց հոգեբանական ազդեցությունը» խորագրով դասընթաց-սեմինար (24,04,2023)
- «Հանդիպում ժամանակակից գրողների հետ» գրական ցերեկույթ (09,05,2023)
- «Առողջ կենսակերպը գալիս է Արարատ» մասնագիտական քննարկում դասընթաց (14,07,2023)
- «Արարատի երիտասարդները հանուն առողջ ապրելակերպի» աշխատանք ֆոկուս խմբերում, հեծանվարշավ, երիտասարդական ֆորում (12,08,2023)
- «Բակային խաղեր ՈԿՖ բանավանում» խրախուսելով ֆիզիկական ակտիվությունը (18,08,2023)
- «Բակային խաղեր Արարատ քաղաքում» խրախուսելով ֆիզիկական ակտիվությունը (25,08,2023)
- «Խրախուսական արշավ դեպի Զանգակատուն» քայլարշավ, զոբասաշրջային վայրերի բացահայտում (27,08,2023)
- «Ֆուտբոլային խաղի բացօթյա ցուցադրություն» (08,09,2023)
- «Գովազդային պաստառների մնացորդների մաքրման և հեռացման աշխատանքներ» (15,09,2023)
- «Ամանորյա ցուցահանդես-տոնավաճառի կազմակերպում» (22,12,2023)
- «Արարատի երիտասարդները հանուն առողջ ապրելակերպի» (04.2024-10.2024)
- «Մեդագրագիտության անվճար դասընթացներ Զանգակատուն, Շաղափ, Լուսաշող համայնքներում» (07.2024-12.2024)

Արդյունքում սահմանված նպատակներն իրականացնելիս, կազմակերպությունը լավ ճանաչում է ձեռք բերել համայնքում, ինչպես ՏԻՄ կառույցների, այնպես էլ մասնավոր հատվածի հետ համագործակցելիս:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակն է ստեղծել համայնքային երիտասարդական կենտրոն, որը հնարավորություն կստեղծի զարգացնել համայնքային կյանքը, իսկ ծրագրի ավարտին համայնքը կունենա իր երիտասարդական կենտրոնը: Ծրագրի ավարտին նախատեսվում է ունենալ կայուն սոցիալական ձեռնարկություն, իր եկամտի աղբյուրներով, իր բյուջեով և իր աշխատակիցներով, ինչը հնարավորություն կտա երիտասարդական կենտրոնի հետագա բարգավաճմանը և իր առջև դրված խնդիրների կատարմանը ու ստանձնած պարտավորությունների կյանքի կոչմանը:

Կազմակերպությունն իր առջև խնդիր է դրել ակտիվացնել համայնքում երիտասարդական կյանքը, ստեղծել միջավայր ստեղծագործելու, մտորելու, հանրային շահը տարբերելու և ի օգուտ համայնքի արարելու:

Արդյունքում ունենում ենք.

- ստեղծագործ միջավայրի ստեղծում
- երիտասարդ մտքերի և գաղափարների գեներացում
- հանրային կարծիքի ստեղծում և առաջմղում
- գործազրկության կրճատում
- զբաղվածության խթանում
- համայնքնային մարզամշակութային կյանքի ակտիվացում
- ինքնակատարելագործվելու, նոր գիտելիքներով և փորձով հարստանալու հնարավորության ընձեռում

Այս նորարարական կենտրոնը դառնալու է տարածաշրջանի այցեքարտը, նպաստելու է մի շարք երիտասարդների ինքնաարտահայտման, ինքնադրսևորման և կայուն հեռանկար ունենալու հնարավորությանը:

Համայնքի կողմից անհատույց տրամադրվող տարածքը վերածվել է երիտասարդական կենտրոնի: Տարածքը ունի բոլոր հնարավորությունները ստեղծելու ժամանակակից կենտրոն, որտեղ առանձնացված է նախասրահը, դասընթացների, սեմինարների սենյակը, գրադարանի համար նախատեսված տարածք, ժամանցի սենյակ, խոհանոց և սանհանգույց: Տարածքն ապահովված է երկրորդ մուտքով, ինչպես նաև ունի ապաստարանի հնարավորություն: Տարածքի շրջակայքը լավ հնարավություն ունի ստեղծելու նաև բակային միջավայր, ինչն էլ հնարավորություն կտա եղանակային բարենպաստ պայմանների դեպքում իրականացնել բացօթյա միջոցառումներ (կինոդիտում, թեմատիկ միջոցառումներ, գաստրոբակ և այլն):

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ծրագրի շահառու հանդիսացող համայնքի երիտասարդները (բնակիչները) հնարավորություն կունենան ունենալ ժամանակակից, տեխնիկական միջոցներով հարուստ կենտրոն, որտեղ ապահոված կլինի նրանց ուսուցանումը և հմտությունների զարգացումը: Համայնքը կունենա զարգացած համայնքային կենտրոն, իր ինտելեկտուալ բազայով, նաև բարելավված և հիմնանորոգված համայնքային գույք: Արարատի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնը պատրաստակամ է կատարել հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ և կենտրոնը դարձնել համայնքային և մարզային նշանակության կառույց: Մինչ այժմ մեր ունեցած ամենամեծ ձեռբերումներից մեկն այն է, որ կարողացել ենք նախորդող տարիների ընթացքում սերտորեն համագործակցել մարզային ՀԿ-ների, ՏԻՄ-ի, ավագանու անդամների, մարզային տնտեսվարողների և այլ կառույցների հետ:

Ռիսկերի գնահատում

Ծրագրի իրականացման հետ կապված ռիսկերը կշռված են, ստեղծվող կենտրոնի հետագա պահպանությունը և շարունակականությունը երաշխավորված՝ սոցալական ձեռնարկատիրությամբ պայմանավորված: Անհաղթահարելի ուժի ազդեցությամբ պայմանավորված ռիսկերը շնորհիվ մեր ճկուն քաղաքականության կդառնան կառավարելի և մենք չենք շեղվի մեր հիմնական առաքելություններից ու նպատակներից: Նախորդող ժամանակահատվածում տեղի ունեցած բոլոր իրավիճակներում (կորոնավիրուս, ռազմական գործողություններ) կիրառված փորձը համոզիչ է:

Ծրագրի աշխատակազմը

Ծրագրի հիմնական կառավարումն իրականացվելու է «Արարատի Երիտասարդական Կենտրոն» ՀԿ-ի անձակազմի կողմից **(վճարվող եւ/կամ կամավորական հիմունքներով)**: ՀԿ-ի նախագահը Գևորգ Մարգարյանն է, ով սկսած դեռ 2001թ. ներգրավված է եղել կամավորական մի շարք աշխատանքներում, հանդիսացել է Արարատի «Քոլսոն» Երիտասարդական Կենտրոն ՀԿ-ի ակտիվ անդամներից մեկը, կազմակերպել է համակարգչային գրագիտության դասընթացներ, հիմնադրել է երիտասարդական ամսաթերթ, աշխատանքային գործունեության ընթացքում ներգրավված է եղել IT-ընկերություններում և ֆինանսաբանկային ոլորտում, մասնակցել է մի շարք վերապատրաստման դասընթացների: Մասնագիտացած է սպասարկման, վաճառքների, կառավարման և IT ոլորտում: Այժմ զբաղեցնում է «Արփինետ» ՍՊԸ-ի Արարատի մասնաճյուղի տնօրենի հաստիքը:

Ծրագրում ներգրավված են այնպիսի աշխատակիցներ, ովքեր ստացել են բարձրագույն կրթություն շրջակա միջավայրի պաշտպանության, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, իրավագիտության և այլ մասնագիտություններով, ինչը նպաստելու է ստացած գիտելիքները և ունեցած փորձը կիրառել կազմակերպության կանոնադրության և ծրագրի պահանջներից բխող միջոցառումների արդյունավետ իրականացման համար:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու ----«Արարատի Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հկ ----

Ծրագրի անուն ---*«Բարեկարգ Երիտասարդական Կենտրոն»* համալիր բարեկարգման ծրագիր ---

Ծրագրի տևողություն ---------- 4 ամիս----------

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)
1.	Հենասյուների ձեռբերում	հատ	12	40.000	480.000
2.	Արևայի LED լուսատուների ձեռքբերում	հատ	12	27.000	324,000
3.	Եզրաքարերի ձեռքբերում	Գծ/մ	50	1.700	85,000
4.	Եզրաքարերի տեղադրման ծառայություն	Գծ/մ	50	1.500	75.000
5.	Սալաքարերի ձեռքբերում (20x20)	ք/մ	200	4.000	800,000
6.	Սալաքարերի ձեռքբերում (3սմ)	ք/մ	100	3.500	350,000
7.	Սալաքարերի տեղադրման ծառայություն	ք/մ	300	2.500	750.000
8.	Ավազի ձեռքբերում (բազալտի փոշի)	$Մ^3$	24	12.000	288.000
9.	Ցեմենտի ձեռքբերում	տոննա	5	57.000	285.000
10.	Հողային աշխատանքեր	$Մ^3$	40	15.000	600.000
11.	Նկուղային տարածքի աղբի մաքրում	ք/մ	326	500	163,000
12.	Նկուղայի տարածքի բետոնապատման աշխատանք	ք/մ	320	2.500	800.000
Ընդամենը					5.000.000

«Արարատի Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հկ

Նախագահ՝ Գևորգ Մարգարյան _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ.